

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ՌԱԶՄԱՎԱՐ ՈՒԹՅՈՒՆ

Կառավարությունը փոփոխություն է կատարում արդյունաբերական քաղաքականության մոտեցումներում: Այսուհետև պետությունը ոչ միայն պատասխանատու է լինելու բարենպաստ բիզնես միջավայրի համար, այլև մասնավոր հատվածը ուղղակիորեն ներգրավելու է ճյուղային արդյունաբերական քաղաքականության մեջ: Մասնավոր հատվածի հետ համատեղ կձևավորվի երկխոսության միասնական հարթակ: Դրա միջոցով առավել հեռանկարային յուրաքանչյուր ճյուղի համար կստեղծվի առանձնահատուկ գործիքակազմ, և կսահմանվեն փոխադարձ պարտավորություններ:

ՀՀ կառավարության ծրագիր



«ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ»

համագործակցության նոր հնարավորությունները

Կառավարությունն իր գործունեությունն սկսեց երկրորդ սերնդի բարեփոխումներով, նպատակ ունենալով արագ փոփոխվող աշխարհում տեղի ունեցող գործընթացներին համահունչ բովանդակություն հաղորդել Հայաստանի տնտեսության զարգացմանը: Նախ և առաջ մենք բովանդակություն ենք տալիս արդեն ստեղծված ինստիտուտներին և կարգավորիչ նորմերին, դրանք դարձնում գործուն և համապատասխանեցնում միջազգային արդի չափանիշներին:

Երկրորդ, մենք սկսեցինք դեպի արտահանում կողմնորոշված ճյուղային արդյունաբերական քաղաքականության իրականացումը՝ առաջին անգամ որդեգրելով «պետություն-մասնավոր» գործընկերության սկզբունքով տնտեսության այս կամ այն հատվածի զարգացման անմիջականորեն մասնակցելու մեր երկրի համար նոր մոտեցումը:

Եվ երրորդ, մենք կառավարության աշխատանքում սկսեցինք կիրառել բոլորովին նոր՝ նախագծային մոտեցումը, ինչն իր հերթին նշանակում է ամենահավակնոտ գաղափարների իրականացման բոլոր գործոնների առկայություն:

Համընդհանուր ճգնաժամը ստիպեց մի քանի տարով հետաձգել կառավարության նախաձեռնած շատ ծրագրեր: Սակայն ճգնաժամը մեզ համար դարձավ նաև վերաինաստավորման ժամանակաշրջան, երբ մենք ընթերցեցինք, թե ինչ է հարկավոր անել զարգացման, մեր քաղաքացիների բարեկեցության բարձրացման, տնտեսական կայուն և երկարաժամկետ աճի ապահովման համար:

Մենք այսօր ապրում ենք արագ փոփոխվող աշխարհում, որտեղ փոխադարձ ազդեցություններն օր օրի ուժգնանում են, և մեր քաղաքականություն-

ըն պետք է կառուցենք այնպես, որ այդ ազդեցությունը ոչ թե նվազեցնենք, այլ առավելագույնս օգտագործենք համուն մեր ձեռնարկատերերի և քաղաքացիների շահերի, ունենանք բաց տնտեսական մոդել:

Մենք հաղթահարել ենք Հայաստանի տնտեսությանը բնորոշ այն հիվանդությունները, որոնցից շատերը բնորոշ են նաև այն պետություններին, որտեղ մեկ շնչին տարեկան բաժին է ընկնում ՀՆԱ-ի երեք հազար դոլար մասնաբաժին: Մենք լուրջ ներուժ ունենք կարճ ժամանակում հաղթահարելու աղքատությունը, որի շնքը մեր երկրում բավական բարձր է: Սա պարտավոր ենք հաշվի առնել մեր տնտեսական մոդելը մշակելիս: Մեզ համար կարևորագույն խնդիր է միջին խավի ձևավորումը, և մեր տնտեսական մոդելը պետք է համապատասխանի նաև այդ խնդրին:

Առաջին անգամ մեր նորանկախ պատմության ընթացքում պետությունն իրականացնում է արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականություն, որի հիմնական սկզբունքը նոր պլատֆորմի ներդրումն է՝ **պետություն-մասնավոր հատված համագործակցությունը**: Սա նշանակում է, որ մենք մասնավոր հատվածի հետ ենք բացահայտում մեր արդյունաբերական քաղաքականության խնդիրները, հարաբերական առավելություններն ու ծրագրերը:

Արտահանմանն ուղղված արդյունաբերական ռազմավարության մեջ ներառված են արդյունաբերության բազմաթիվ ճյուղեր՝ ճշգրիտ ճարտարագիտություն, դեղագործություն և բիոտեխնոլոգիաներ, կոնյակագործություն, աղամանագործություն, ոսկերչություն, ժամագործություն, տեքս-

տիլ արդյունաբերություն, սննդի արտադրություն, գինեգործություն և այլն: Ռազմավարությամբ բացահայտվել է երկրի արդյունաբերական ներուժը՝ ըստ ճյուղերի, գնահատվել, թե ինչ հումքային, ինտելեկտուալ և ենթակառուցվածքային ռեսուրսներ կան հանրապետությունում:

Երեք ճյուղերի՝ կոնյակագործության, դեղագործության և ճշգրիտ սարքաշինության ոլորտներում զարգացման ծրագրերն արդեն իսկ մշակվել են մասնավոր հատվածի հետ և կնքվել են համագործակցության պայմանագրեր: Այս ոլորտներում առկա ռազմավարական ծրագրերը ենթադրում են արտահանման ծավալների կտրուկ ավելացում: Մյուս ճյուղերում ևս առաջիկայում կքննարկվեն զարգացման և արտահանման հստակ ծրագրեր:

Ակնկալվում է, որ ռազմավարության իրագործումը կհանգեցնի տնտեսության և արտահանման կառուցվածքի դիվերսիֆիկացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, իսկ արդյունաբերական քաղաքականության հիմնական թիրախն արտահանման ներուժ ունեցող վերամշակող արդյունաբերությունն է:

Արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունը ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորմանը զուգահեռ ուժեղ պետություն կառուցելու ճանապարհին սիներգետիկ էֆեկտ կհաղորդի:

Գործընթացը, որ մենք սկսել ենք այսօր, տարեցտարի կավելացնի մեր հնարավորությունները՝ մեր տնտեսությունն ավելի պատրաստ դարձնելով արտաքին և ներքին մարտահրավերներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՏԱՇԱՆՄԱՆ ՈՒՂՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ՌԱԶՄԱՎԱՐ ՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի տնտեսության մրցունակության բարձրացման և շարունակական տնտեսական աճի ապահովման նպատակով ՀՀ կառավարությունը նախաձեռնել է ակտիվ արդյունաբերական քաղաքականություն, որը միտված է տնտեսության արտահանելի հատվածի ընդլայնմանը՝ արտահանման ներուժի բացահայտման և արդյունավետ իրագործման ճանապարհով:

Արդյունաբերական քաղաքականության ուղղակի թիրախը կհանդիսանա վերամշակող արդյունաբերության ճյուղերի և համալիրների զարգացումը:

ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականությունն արտահանման զարգացման ներուժ ունեցող ոլորտների միջազգային մրցունակության բարձրացմանն ուղղված հավասարակշռված և փուլային միջոցառումների համախումբ է, որի նպատակն է արտահանման աճը և դիվերսիֆիկացումը:

ՀՀ կառավարությունը հայտարարել է գիտելիքահեղին տնտեսություն կառուցելու իր երկարաժամկետ ռազմավարական նպատակը: Հիմք ընդունելով դա՝ արդյունաբերական քաղաքականության ուղղորդող տեսլականը կլինի Հայաստանը դարձնել բարձրարժեք և գիտատար ապրանքների և ծառայությունների արտադրության երկիր, որի առանցքը ստեղծագործ մարդկային կապիտալն է: Այս տեսլականի իրագործումը պահանջում է փուլային մոտեցում, ենթադրելով աստիճանական անցում ռեսուրսափնտեսիլ արտադրությունից դեպի ունակության և հմտության և, այնուհետև, գիտելիքի վրա հիմնված արտադրության գերակշիռ դերակատարություն երկարաժամկետ հեռանկարում:

Սույն փաստաթուղթն ամրագրում է ՀՀ կառավարության արդյունաբերական քաղաքականության հիմնական ուղղությունները, սկզբունքները և գործիքակազմը:


ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՓՈԽԼԻ ԱՐՏԱՅԱՆՆԵԼԻ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Ռազմավարության մեկնարկային փուլը ներառում է արդյունաբերական քաղաքականության իրականացմանը մեկնարկ տվող հիմնական կենտրոնացման ոլորտների նախորդումը և համապատասխան ոլորտային ռազմավարությունների իրականացումը: Մեկնարկային փուլի հաջող իրականացման պարագայում ընդունված քաղաքականությունը կիրականացվի նաև մյուս ոլորտների առնչությամբ:

Կառավարության կողմից արդեն իսկ գերակա հայտարարված ուղղությունների հետ միջոլորտային փոխազդեցությունները (սիներգիա) նպաստելու են նախաձեռնությունների ազդեցության մեծացմանը: Այդ առումով արդյունաբերական ռազմավարության մեկնարկային փուլի ոլորտային կիզակետերի ընտրության ժամանակ այն դիտվում է որպես կարևոր գործոններից մեկը: Սույն ռազմավարության ոլորտային հերթականության սահմանման համար առանցքային նշանակություն ունեն ՂԿ կառավարության կողմից գերակա սահմանված հետևյալ ոլորտները, որոնցում հաստատվել են ոլորտային զարգացման ռազմավարությունները կամ իրականացվում են առանցքային նախագծեր.



- Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ,
- Զբոսաշրջություն,
- Առողջապահություն,
- Կրթություն,
- Գյուղատնտեսություն:

Այս մոտեցման արդյունքում վերանշակող արդյունաբերության ոլորտները և այլ փոխկապակցված տնտեսության ճյուղերը դիտարկվել են միասնական զարգացման համատեքստում՝ որպես համապատասխան համալիրներ (քլաստերներ): Այսօր տնտեսության և արտահանման կառուցվածքում գերակշռող են ռեսուրսների վրա հիմնված քլաստերները: Զարգացման հաջորդ փուլում առավելապես ածելու են ունակությունների վրա հիմնված ճյուղերը, իսկ այնուհետև՝ գիտելիքահենք ոլորտները:



Հորիզոն 1. Առկա կարողությունների մասշտաբայնացում (2011-2013 թթ). Ընդգրկում է ածի ներուժ ունեցող այն ոլորտները կամ ճյուղերը, որոնք վերջին տարիներին ունեցել են ամենամեծ արտահանման ծավալ և կայացած դիրքեր արտահանման շուկաներում՝ կոնյակագործություն, աղանմանագործություն, ոսկեգործություն, ժամացույցի արտադրություն, թեթև արդյունաբերություն: Այս ոլորտներում հնարավոր է արտադրության ծավալի ավելացում՝ չափավոր կապիտալ ներդրման պարագայում: Քաղաքականությունն ուղղված կլինի արտահանման խրախուսմանը և զարգացման խոչընդոտների արագ վերացմանը:


Հորիզոն 2. Զնավորվող կարողությունների/ոլորտների զարգացում (2011-2015 թթ). Ընդգրկում է այն ճյուղերը կամ ոլորտները, որոնք վերջին տարիներին ունեցել են դինամիկ աճ, սակայն ծավալային առումով դեռևս չեն գերազանցում 10 մլն դոլարը. դեղագործություն և բիոտեխնոլոգիա, պահածոյի արտադրություն, գինեգործություն, հանքային ջրի և հյուսիսի արտադրություն: Քաղաքականությունն ուղղված կլինի մասշտաբային ներդրումների ներգրավմանը, համակարգային խնդիրների լուծմանը և արտադրական/ արտահանման կարողությունների զարգացմանը:



Հորիզոն 3. Աճի նոր շարժիչներ (2011-2020 թթ). Նոր ոլորտներ/ճյուղեր կամ հատվածական կարողություններ ունեցող ոլորտներ՝ հիմնականում գիտատար և տեխնոլոգիատար՝ *ՃճՊ-ի ճարտարագիտություն*: Այս ոլորտներում անհրաժեշտ կլինի առավել ընդգրկուն քաղաքականություն՝ տեխնոլոգիայի փոխանցման և նորարարության խրախուսման շեշտադրումով:

Մեկնարկային փուլում առաջնային թիրախ հանդիսացող վերամշակող արդյունաբերության ոլորտները դասակարգվել են ըստ ժամանակային հորիզոնների, ինչը ենթադրում է միջամտության և աջակցման գործիքակազմի համապատասխան կիրարկում:

Ռազմավարության մեկնարկը կտրվի երեք հորիզոններից մեկական ոլորտում՝ *ՃճՊ-ի ճարտարագիտություն, դեղագործություն, կոնյակագործություն*, զուգահեռաբար աշխատանք տանելով մեկնարկային փուլի ռազմավարությանը սահմանված մյուս ոլորտային ռազմավարությունների մշակման ուղությամբ:



ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ

Ռազմավարությունը ենթադրում է պետական և մասնավոր հատվածների, ինչպես նաև տնտեսության տարբեր ոլորտներում նախաձեռնությունների համակարգված և ներդաշնակ գործունեություն:

Ռազմավարության իրականացման հիմնական կառույցներն ու խորհրդակցական մարմիններն են.

1. ՀՀ վարչապետին կից արդյունաբերական խորհուրդը (այսուհետ՝ Արդյունաբերական խորհուրդ)
2. ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը,
3. Ոլորտային ռազմավարության խորհուրդները,
4. Զարգացման հայկական գործակալությունը:

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԿԻՑ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Արդյունաբերական քաղաքականության իրականացումն ապահովելու և ՀՀ պետական այլ կառույցների գործունեությունը համակարգելու է ՀՀ վարչապետին կից արդյունաբերական խորհուրդը, որը, հանդիսանալով ռազմավարության իրականացման աշխատանքը համակարգող բարձրագույն մարմին, կապահովի ռազմավարության իրականացման հետ կապված խնդիրների լուծումը: **Խորհրդի ձևավորման հիմնական սկզբունքն է հանդիսացել խորհրդի կազմում մասնավոր հատվածի մեծամասնության ապահովումը:**

Արդյունաբերական խորհրդի հիմնական գործառույթներն են.

- Ռազմավարությամբ նախանշված միջոցառումների իրականացման նպատակով ներկայացնում է համապատասխան առաջարկություններ պետական մարմիններին, ոլորտային խորհուրդներին և շահագրգիռ այլ կողմերին,
- Քննարկում և հաստատում է Ռազմավարության իրականացման արդյունքների հաշվետվությունները,
- Ռազմավարության շրջանակում գործողության ծրագրերի քննարկումը և հաստատումը, ինչպես նաև հետագա քայլերի նախանշումը:

Արդյունաբերական խորհրդի միստերը զուսմարվում են տարին չորս անգամ, ըստ անհրաժեշտության կարող են զուսմարվել նաև արդյունաբերության խորհրդի արտահերթ միստեր:

* Համաձայն ՀՀ ԱԿԾ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի՝ մեքենաների և սարքավորանքի արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում, համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի, էլեկտրական սարքավորանքի, խաղերի և խաղալիքների, բժշկական և ատամնաբուժական գործիքների ու սարքերի, այլ խմբավորումներում չներառված արտադրատեսակների արտադրություն:

ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

- ՀՀ վարչապետ – Խորհրդի նախագահ,
- ՀՀ Էկոնոմիկայի նախարար – Խորհրդի նախագահի տեղակալ,
- ՀՀ Նախագահի գլխավոր խորհրդական,
- ՀՀ Ֆինանսների նախարար,
- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ,
- ՀՀ գյուղատնտեսության նախարար,
- ՀՀ Էկոնոմիկայի նախարարության արդյունաբերության ոլորտը համա-կարգող պատասխանատու պաշտոնատար անձ – խորհրդի գործադիր քարտուղար,
- Ջարգացման հայկական գործակալության տնօրեն,
- Հայաստանի գործարարների և արդյունաբերողների միության նախա-գահ (համաձայնությամբ),
- ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի նախագահ (համաձայնու-թյամբ),
- Ոլորտային ասոցիացիաների կամ միությունների ղեկավարներ, փորձա-գետներ (ռոտացիոն սկզբունքով),
- Դոնոր կազմակերպության ներկայացուցիչ (համաձայնությամբ):

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Արդյունաբերական քաղաքականության մշակման և իրագործման ապա-հովման պատասխանատուն ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունն է, որը.

- մշակում է արդյունաբերական քաղաքականությունը,
- ներկայացնում է արդյունաբերության շահերը պետական նախաձեռնու-թյունների շրջանակում,
- ապահովում է ռազմավարության իրականացման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունների ներկայացումը արդյունաբերական խորհրդին,
- ապահովում է ռազմավարության տարեկան վերանայման գործընթացի կազմակերպումը և Արդյունաբերական խորհրդին առաջարկություններ ներկայացնում անհրաժեշտ փոփոխությունների վերաբերյալ,
- համակարգում է դոնոր կազմակերպությունների հետ աշխատանքը մաս-նավոր հատվածի զարգացման ծրագրերի շրջանակում,
- ապահովում է ոլորտային խնդիրների ներկայացումը շահագրգիռ մար-միններին:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Քաղաքականության և դրանից բխող ոլորտային ռազմավարությունների իրականացման հաջողության և արդյունավետության գրավականը պետական և մասնավոր հատվածի գործողությունների ներդաշնակեցումն է և սերտ հա-մագործակցությունը: Այդ առումով պետությունն ակտիվորեն ներգրավելու է ոլորտների հիմնական շահագրգիռ կողմերին (գործարար միություն, ոլորտա-յին և մասնագիտական ասոցիացիա, կրթական և հետազոտական կազմակեր-պություն, ընկերություն և այլն) գործողությունների պլանավորման, որոշումնե-րի կայացման և արդյունքների գնահատման գործընթացներում: Այդ նպատա-կով ստեղծվելու են ոլորտային խորհուրդներ, որոնք հարթակ կհանդիսանան պետության և մասնավոր հատվածի միջև մասնագիտական երկխոսության և գործողությունների համակարգման համար:

Ոլորտային ռազմավարության խորհուրդների կազմ

Ոլորտային խորհուրդը պետք է ներառի շահագրգիռ պետական մարմիննե-րի, ինչպես նաև գիտական և ուսումնական հաստատությունների և գործարար հատվածի ներկայացուցիչներին:

Խորհրդի ձևավորման հիմնական սկզբունքը կհանդիսանա խորհրդի կազմում մասնավոր հատվածի մեծամասնության ապահովումը: Մասնա-վոր հատվածի ներկայացուցիչների համաձայնությամբ խորհրդում նրանց կարող են ներկայացնել միությունը կամ նրանց կողմից լիազորված ներկա-յացուցիչը:

Խորհրդին հրավիրյալի կարգավիճակով կարող են մասնակցել դոնոր կազ-մակերպությունների, պետական այլ կառույցների և ֆինանսական կազմակեր-պությունների ներկայացուցիչներ:

Գործառույթներ

Խորհրդի հիմնական նպատակն է ապահովել բոլոր շահագրգիռ կողմերի ա-նընդհատ երկխոսությունը: Խորհուրդը

- Հաստատում է ոլորտային ռազմավարությունները,
- Քննարկում և հաստատում է գործողությունների տարեկան ծրագրերը և հիմնական կատարողական ցուցանիշները` ելնելով ոլորտային ռազմա-վարությունից,
- Քննարկում և հաստատում է տարեկան գործողությունների ծրագրի կա-տարողական հաշվետվությունը,
- Քննարկում և արդյունաբերական խորհրդին է ներկայացնում առաջար-կություններ կարգավորման դաշտում ոլորտին առնչվող փոփոխություն-ների վերաբերյալ,
- Ապահովում է անընդհատ հետադարձ կապ նոր հնարավորությունների և առաջացած խնդիրների վերաբերյալ:

Որոշումների կայացում

Խորհրդի ստեղծումը, ռազմավարության հիմնական նախաձեռնությունները և դրա մեկնարկն ամրագրվում են ՀՀ կառավարության և մասնավոր հատվածի ներկայացուցիչների միջև կնքվող հուշագրով:

Որոշումների կայացման ժամանակ գերակայություն կտրվի համընդհանուր փոխհամաձայնության սկզբունքին:

Նիստերի գումարումը

Խորհրդի ժողովները գումարվում են առնվազն եռամսյակը մեկ անգամ: Ըստ անհրաժեշտության կարող են գումարվել արտահերթ նիստեր` նախա-ձեռնված ոլորտի ներկայացուցիչների կամ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից:

Ջարգացման հայկական գործակալություն

Ջարգացման հայկական գործակալությունը (ՁՀԳ) լինելու է ռազմավարու-թյուն իրականացնող առանցքային կառույցը:

Առ այսօր ձևավորվել են դեղագործության և բիոտեխնոլոգիայի, ճշգրիտ ծարտարագիտության, կոնյակագործության և գինեգործու-թյան ոլորտային խորհուրդները,

ՀՀ վարչապետին կից արդյունաբերական խորհրդի նիստին ՀՀ կառավարության և կոնյակագործության և դեղագործության ու բիո-տեխնոլոգիայի ոլորտային ռազմավարությունների իրականացման վերաբերյալ ստորագրվել են հուշագրեր` ՀՀ կառավարության և ոլոր-տային միությունների, ընկերությունների, ԲՈՒՀ-երի և գիտահետազո-տական ինստիտուտների միջև` ամրագրելով ոլորտային ռազմավա-րությունների հիմնական նախաձեռնությունների մեկնարկը,

Դեղագործության և բիոտեխնոլոգիայի 2012-15թթ., ինչպես նաև Կոնյակագործության 2012-2015թթ. ոլորտային ռազմավարություննե-րի իրականացումն ապահովող գործողությունների ծրագրերը հաս-տատվել են համապատասխան Ոլորտային խորհուրդների կողմից, այնուհետև ներկայացվել են ՀՀ վարչապետին կից արդյունաբերա-կան խորհրդի նիստին և հավանության արժանացել:

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ

«Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամը» համակարգելու է նորարարության աջակցման համակարգի ձևավորման նախաձեռնությունները, մասնավորապես, վեմչուրային կապիտալի հիմնադրամի, նորարարության դրամաշնորհների, տեխնոպարկի ստեղծումը և իրականացումը:

Առևտրային ներկայացուցչություններ և ներկայացուցիչներ: Հայաս-տանի առևտրային ներկայացուցչությունները և ներկայացուցիչները համա-գործակցելու են ռազմավարության իրականացման մարմինների հետ արտերկ-րում ՀՀ և/կամ Հայաստանի առանձին տնտեսվարող սուբյեկտների տնտեսա-կան շահերի ներկայացման, գործարար կապերի հաստատման, առևտրա-տնտեսական համաձայնագրերի և պայմանագրերի կնքմանը աջակցության միջոցով:

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն (ՓՄՁ ԶԱԿ): ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամը, լինելով ՓՄՁ պետական աջակցության ծրագրերի իրականացման գործակալություն, իր գործառույթների շրջանա-կում աջակցելու է ՓՄՁ-ներին և սկսնակ գործարարներին` ոլորտային ռազմա-վարությունների շրջանակում արդյունավետ ինտեգրվելու արտահանման ար-ժեշղթայում:

«ՓՄՁ Ներդրումներ» ՈՒՎԿ: «ՓՄՁ Ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպությունը, որը ստեղծվել է պետության կողմից և ֆինանսավորվում է պետական միջոցներով, յուրահատուկ ֆինանսական գործիքներով կփոխլ-րացնի մասնավոր ֆինանսական կառույցներին` ապահովելով ՓՄՁ-ները մատ-չելի ֆինանսական միջոցներով: Նախատեսվում է արտահանման խթանման նոր գործիքների մշակում և կիրառում, մասնավորապես` արտահանման պայ-մանագրերի հիման վրա վարկավորման մեխանիզմների ստեղծում:

«Համահայկական բանկը» արտահանմանն ուղղված ռազմավարության շրջանակում ֆինանսավորելու է երկարաժամկետ համակարգաստեղծ նախա-ձեռնությունները և ենթակառուցվածքային նախագծերը:

Այլ կառույցներ:

Հորիզոն 1 (2011-2013) Առկա կարողությունների մասշտաբայնացում	Հորիզոն 2 (2011-2015) Զևավորվող կարողությունների զարգացում	Հորիզոն 3 (2011-2020) Աճի նոր շարժիչներ
• Կոնյակագործություն • Աղտմախեղգործություն • Ոսկերչություն • Ժամագործություն • Տեքստիլ արդյունաբերություն	• Դեղագործություն և բիոտեխնոլոգիաներ • Պառածոների արտադրություն • Գինեգործություն • Շշալցված հանքային ջրերի արտադրություն • Հյութերի արտադրություն	• Ճշգրիտ ճարտարագիտություն
• Հարաբերակտնորեն մեծ արտադանման ծավալ • Մաշտաբայնացման համար օժանդակության կտրիք	• Դինամիկ զարգացում • Նոր կարողությունների ձևավորման տնիրաժեշտություն	• Հեռանկարային զարգացման ներուժ • Հնարավորությունների զարգացման տնիրաժեշտություն

ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունաբերական քաղաքականության ռազմավարության շրջանակում իրականացվող գործունեության հիմքում դրված է պետություն-մասնավոր հատ-ված համագործակցության սկզբունքը և համապատասխան ռեսուրսների պահանջները ներկայացվում են ոլորտային ռազմավարություններում` ըստ նախաձեռնությունների:

Վերջիններիս ֆինանսավորման աղբյուր են հանդիսանալու ՀՀ պետական բյուջեն, մասնավոր հատվածը և դոնոր կազմակերպությունները: Պետական և դոնոր կազմակերպությունների աջակցությունն իրագործվելու է ռազմավա-րության շրջանակում նախանշված գործիքակազմի միջոցով և սկզբունքներով: Ոլորտային ռազմավարությունները հիմք են հանդիսանալու մասնավոր հատ-վածին ուղղված պետական և դոնոր կազմակերպությունների նախաձեռնու-թյունների համակարգման և ջանքերի ուղղորդման և փոխլրացման համար:

ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոն
Տպաքանակը` 8.000 օրինակ